
ՄՈՆԻՏԱՐԻ «ԱՐՄԵՆՅԱՆ» ԹԱՏԵՐԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1981-1985)

ԲԵՔԱՐՅԱՆ Ա. Ա.

Կանադահայ գաղութում 1976-ից գործում է Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը: Անդրադառնանք թատերախմբի՝ 1981-1985 թթ. գործունեությանը¹: Շուրջ մեկ տարվա ընդմիջումից հետո, 1981-ի աշնանը, նա վերսկսում է իր բեմական գործը: Թատերաշրջանի բացումը տեղի ունեցավ հոկտեմբերի 24-ին և 25-ին «Մարի Անն» լեփ-լեցուն թատերասրահում ներկայացված «Չարշըլը Արթին աղա» կատակերգությամբ²: Արևմտահայ ականավոր երգիծաբաններ Միքայել Կյուրճյանի (1879-1965) և Երվանդ Օտյանի (1869-1926) այս կատակերգությունը, ինչպես հետագայում նշել է Ե. Օտյանն իր՝ տվյալ ժանրի մեջ յուրահատուկ գրչու խոսքով՝ «Տասներկու տարի Պոլսեն դուրս» (1896-1908) հուշագրական երկում, 1906-ին «հույնի խարխիկ սրճարանի մը մեջ» գրած «Ֆրանքո-թրքական պատերազմ» կատակերգությունն է, «գոր հետո Պոլսո մեջ «Չարշըլը Արթին աղա» անունով մկրտեցին և որ այնքա՛ն ընդունելություն գտած է հոս և թե գավառներուն մեջ, առանց տասը փարա շահ բերելու հեղինակներուն»³: Այս ստեղծագործության մեջ, որն առաջին անգամ հրատարակվել է 1909-ին, հեղինակները ծաղրել են ազգային արժեքների ժխտման, եվրոպական մշակույթի հանդեպ ունեցած ստորաքարշության և ապագայնացման գաղափարը: Կատակերգությունն առաջին անգամ բեմադրվել է 1906-ին Կահիրեում՝ սիրողական խմբի ուժերով և, չնայած դրան, ունեցել է մեծ հաջողություն: Նշենք, որ այս կատակերգությունը, բարքերի ճշմարիտ արտացոլման շնորհիվ, միշտ էլ խանդավառ ընդունելություն է գտել հայ թատերասեր հասարակայնության մեջ:

Ներկայացման մեջ գլխավոր դերում (Չարշըլը Արթին աղա. չարշըլը - շուկայի մարդ, վաճառական) և որպես բեմադրիչ հանդես է եկել Արտո Նշանյանը⁴: Մյուս դերերը կատարել են Ռ. Վասիլյանը, Մ. Աբանյանը, Վ. Սավուլյանը, Վ. Թաշճյանը, Գ. Գանարը, Ժ. Խանճյանը, Ժ. Մխճյանը և այլք:

¹ Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի առաջին հինգ տարվա՝ 1976-1980 թթ., գործունեության մասին տե՛ս **Բեքարյան Ա.**, Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը (Հայ արվեստի հարցեր, 2012, - 4, էջ 44-71):

² Տե՛ս **Պասմաճեան Գ.**, Մոնթրեալի Արմենեան թատերախումբը (Գեղարդ, 1981, - 55, էջ 17):

³ **Երվանդ Օտյան**, Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Ե., 1962, էջ 301:

⁴ Արտո սարկավագ Նշանյան (1933-1999)- սփյուռքահայ դերասան, բեմադրիչ, ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանը: Խաղացել է Կահիրեի Համազգային, Հայ Գեղարվեստասիրաց և Ընթերցասիրաց միությունների, ինչպես նաև Արաքսի Օհանյանի, Արփիար Վարդ-

Ականատեսների վկայությամբ՝ ներկայացումն արժանացել է հանդիսատեսի ջերմ ընդունելությանը. նրանց մեջ եղել են նաև մի քանի տասնյակ օտարազգիներ, և մեծ խանդավառություն է առաջացրել կանադահայ լայն խավերի մեջ: Դա բացատրվում է նրանով, որ, նախ, «Արմենեան թատերախումբը, անկախ թատրոնի գծով հայ մշակոյթի ծառայելու իր կոչումէն, ունի... աւելի վսեմ տեսլական մը, աւելի նուիրական առաքելութիւն մը, որ է իր ասպնջական երդիքին տակ, առանց խտրականութեան ընդունիլ համայնքիս բոլոր հոսանքներուն պատկանող թատերասէրներ»⁵: Իրոք, սփյուռքահայ իրականության բարդ պայմաններում բավական դժվար է համախմբել աշխարհի այլևայլ ծայրերից Կանադա ներգաղթած «տարբեր գաղափարական հոսանքներու, տարբեր դաւանանքներու պատկանող պատուական հայորդիներ, մեր բազմադարեան տոհմիկ մշակոյթին ծառայելու նուիրական առաջադրութեամբ»⁶: Երկրորդ, առավել կարևոր և հուսադրիչ է այն իրողությունը, որ XX դ. երկրորդ կեսին Հյուսիսային Ամերիկայի մայրցամաքում հաստատված հայերի մեջ «տակաւին կան բուռ մը նուիրուած հայորդիներ, որոնք հայ բնի ծառայելու տենչով տոգորուած, սիրայօժար կը տրամադրեն իրենց ժամանակը առանց ամենադոյզն նիւթական ակնկալութեան»⁷: Եվ միանգամայն հասկանալի է, այլ ոչ թե զարմանալի, այն փաստը, որ այդ «բուռ մը նուիրուած հայորդիներից» մեկը՝ տոքթ. Շավարշի դերակատար Վահագն Սավուլյանը, «հայ թատրոնի նուիրական ատրուշանին ծառայելու» նպատակով, այդ ներկայացումներին մասնակցելու համար իր սեփական միջոցներով է Լոս Անջելեսից ժամանել Մոնրեալ և վերադարձել:

Ինչպես հայտնի է, Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը «Զարշլը Արթին ադա» կատակերգությունն առաջին անգամ ներկայացրել է դեռևս 1976-ի նոյեմբերի 7-ին՝ Սելմա Քերիկյանի բեմադրությամբ⁸: 1981-ին կայացած ներկայացմանը նախկին դերակատարներից մասնակցել են միայն Ա. Նշանյանը (բեմադրիչ, և Արթին ադա) և Հրանտ Պահլավը (Ռոստովից, ռուսահայ):

Դերասանական նոր խումբը կարողացել է հաջողությամբ լուծել իր առջև դրված խնդիրները: Իր բնական, հմուտ և արհեստավարժ խաղով հատկապես աչքի է ընկել «Արմենյան» թատերախմբի հիմնական ուժերից մեկը՝ Ա. Նշանյանը, որը կարողացել է ճշգրտորեն մարմնավորել Արթին ադայի կերպարը և շատ

յանի, Սեդի Գոչունյանի անհատական թատերախմբերում: 1963-ին հաստատվել է Կանադայում: 1965-ին ձեռնադրվել է սարկավագ և 34 տարի անընդմեջ ծառայել նախ Մոնրեալի Ս. Հակոբ, ապա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում:

⁵ Պասմաճեան Գ., նշվ. հոդվ., էջ 17:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս Բեքարյան Ա., նշվ. հոդվ., էջ 45-49:

հաճելի թույլենք պարզել հանդիսականներին՝ բազմիցս արժանանալով նրանց բուռն ծափահարություններին:

Թատերախմբի հնագույն անդամ Ռ. Վասիլյանին վստահվել էր Արթին աղայի կնոջ՝ Եվփիմեի դերը: Հիշենք, որ 1976-ին այդ կերպարը մարմնավորել է տաղանդաշատ երգչուհի և դերասանուհի Սելմա Քեքլիկյանը⁹: Այդ պարագայում հաճելի է արձանագրել, որ Ռ. Վասիլյանը կարողացել է պատվով դուրս գալ այդ փորձությունից և իր կերտած Ջարուհու (Ս. Էքմեքճյան՝ «Հարս ու կեսուր»), Սյուզի Գուրտուայի (Ս. Պանյոլ՝ «Տոպագ»), մոր (Պ. Մասիկյան՝ «Աղջիկտես») կերպարներին ավելացնել ևս մեկ՝ հաջողությամբ ստեղծած կերպար: Ինչպես նշում է մամուլը, «Ռոզալիան՝ արդեն իսկ մեր բեմին վրայ վստահելի եւ ուշագրաւ ոյժ մը կը հանդիսանայ»¹⁰:

Սյուս դերակատարները նույնպես հաջող են հանդես եկել և արժանացել հանդիսականների ջերմ ընդունելությանը: Այսպես, Լոս Անջելեսից հրավիրված Վ. Մավուլյանը յուրովի և նորովի է մեկնաբանել տոբթ. Շավարշի կերպարը և արժանացել հատուկ ուշադրության: Թատերախմբի նոր, բայց խոստումնալից անդամ Մ. Աբանյանը, թատերախմբի փորձառու դերասաններ Վ. Թաշճյանը և Ժ. Մխճյանը նույնպես հաջողությամբ են ներկայացրել իրենց հերոսներին՝ երկու ծայրահեղ հայացքներ ունեցող ծնողների խելացի և հնարամիտ դասերը՝ Ռոզին և Ագրիպաս աղային ու Նիկողոս աղային՝ արժանանալով հանդիսականների բուռն ծափահարություններին: Իրենց խաղով լավ տպավորություն են թողել նաև երիտասարդ ու համակրելի Գ. Գանարը (Տիրան), երաժշտական շրջանակերում հանրաժանոթ Ժ. Խանճյանը (Լևոն), շնորհալի Ա. Լիպարյանը (Գառնիկ աղա), Հ. Հեքիմօղլուն (Վահան) և մյուսները: Գնահատելի աշխատանք են կատարել նաև երաժշտության (Միրվարդ Նշանյան), դիմահարդարման (Մալբի Քեշիշյան) և բեմավարության (Հակոբ Էվերեկյան) պատասխանատուները:

Այսպիսով, վստահաբար կարելի է արձանագրել, որ Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը, չնայած առկա դժվարություններին և որոշ թերացումներին, կազմակերպիչների, դերասանական խմբի և օժանդակ անձնակազմի տքնաջան աշխատանքի շնորհիվ, կարողացել է հաջողությամբ իրականացնել նոր թատերաշրջանի բացումը:

⁹ Սելմա Քեքլիկյան (ծնվ. 1927) - սփյուռքահայ օպերային երգչուհի, դերասանուհի, ազգային գործիչ, «Արմենյան» թատերախմբի հիմնադիր (1976): Ավարտել է Գահիրեի կոնսերվատորիան: Եղել է Գահիրեի պետական օպերային թատրոնի երգչախմբի անդամ, դերեր է ստանձնել հյուրախաղերի եկած Միլանի «Լա Սկալա» և Բելգրադի օպերային թատրոնների մենակատարների հետ: 1962-ին տեղափոխվել է Մոնրեալ, հանդես եկել մենահամերգներով, ելույթ ունեցել կանադական հեռուստատեսությամբ, երգել Մոնրեալի օպերային թատրոնում, նկարահանվել կինոֆիլմերում:

¹⁰ Էվերեկյան Դ. Յ., «Չարշըլը Արթին աղա»-յի ներկայացումը (Քուլիս, 15.III.1982, էջ 22):

Թատերախումբը չի սահմանափակվել միայն Մոնրեալով. 1980-ի աշնանը ներկայացումներ է տվել նաև Կանադայի մյուս հայաշատ քաղաքում՝ Տորոնտոյում, ներկայացնելով Պ. Մասիկյանի «Աղջիկտես» և Գրեմ Սիմոնի «Հարս ու կեսուր» կատակերգությունները: Այդ ազգապահպան և հայանպաստ նախաձեռնությունը շարունակվել է նաև հետագայում:

1981-ի դեկտեմբերին Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի տասներկու դերասաններ, ընդառաջելով Օտտավայի Հայ մշակութային միության հրավերին և հաղթահարելով խստաշունչ ձմեռվա դժվարությունները, ավտոմեքենաներով մեկնում են Մոնրեալից 180 կմ հեռավորության վրա գտնվող մայրաքաղաք՝ Օտտավա, տեղի փոքրաթիվ հայ համայնքին (որը չունեւ ոչ եկեղեցի, ոչ վարժարան) թատերաասմունքային մի ցերեկույթ մատուցելու: Այն նախատեսված էր անցկացնել հունական եկեղեցում, որտեղ թատերախմբի անդամներին դիմավորում են Օտտավայի Հայ մշակութային միության ղեկավարները: Դերասաններն անակնկալի են գալիս և մնում ապշած, երբ տեսնում են, որ բեմը, որտեղ դերասանները պետք է հանդես գային, չունեւ ոչ վարագույր, ոչ կուլիս, ոչ դեկոր..., մի խոսքով՝ պիտանի չէր ներկայացման համար: Բայց ժամանակ չկար որևէ բան ձեռնարկելու. կամ պետք է հրաժարվեին ցերեկույթից, կամ հարավրվեին առկա պայմաններին: Մի քանի աշխատասեր ու հնարամիտ կանայք՝ Բ. Էվերեկյանի ղեկավարությամբ, ծածկոցներով հանպատրաստից հարդարում են կուլիսն ու բեմը, թատերաասմունքային ցերեկույթը կայանում է՝ ներկաների մեջ առաջացնելով մեծ հետաքրքրություն:

Այս հանդեսը, որի ընթացքում ներկայացվում են երեք ողբերգական ու հինգ կատակերգական նյութերից վերցված առանձին կտորներ, բաղկացած էր երկու մասից: Առաջինում բեմականացվել են Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտ», Հակոբ Այվազի (Այվազյան) «Շատերեն մեկը», Ալեքսանդրովիչի «Աշխարհի դատաստանը», Միքայել Կյուրճյանի և Երվանդ Օտյանի «Չարշըլը Արթին աղա», իսկ երկրորդում՝ Գևորգ Պաղճյանի¹¹ «Թաղականը», Հովհաննես Ամիրենցի «Թիւ

¹¹ Պաղճյան Գևորգ (Վազգեն Այգունի, 1913-1999) - սփյուռքահայ մշակութային և հասարակական գործիչ, Հայ դատի ջատագով, իրավագիտության դոկտոր: Սովորել է Բեյրութի Հիսուսյան հայրերի Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանում, ապա՝ Սեն Ժոզեֆ ֆրանսիական համալսարանում: 1970-ին հաստատվել է Կանադայում, դասավանդել է հայագիտություն Քվեբեկի համալսարանում, 1972-ին Մոնրեալում հիմնել է առաջին հայերեն հեռուստահաղորդումները, կազմակերպել է Պոլ-սահայ մշակութային միության ՄԷԿ (Մխիթարյան-Էսայան-Կեղրոնյան) մարմինը՝ «Մեկ ազգ՝ մեկ մշակույթ» նշանաբանով: 1975-ին ընտրվել է (այնուհետև՝ վերընտրվել յոթ անգամ) 32 ազգությունների ներկայացուցիչներից բաղկացած «Էթնիկ խմբավորումների միության» նախագահ, պարգևատրվել է Կանադայի «Order of Canada» բարձրագույն շքանշանով: Հեղինակ է նաև մի շարք թատերգությունների («Թաղականը», «Դեպի երկիր», «Հրաշալի գյուտը», «Արդար դատաստանը», «Ազգասեր գործիչը» և այլն):

5 խելագարը»¹², Պարույր Մասիկյանի «Աղջիկտեսը»¹³, Գրեմ Սիմոնի (Սիմոն Էքմեքճյան) «Հարս ու կեսուր» ստեղծագործություններից քաղված հետաքրքրական հատվածներ¹⁴:

Այդ ցերեկույթին ակտիվ մասնակցություն է ունեցել Էվերեկյան դերասանական ընտանիքը: Նախ, բեմադրիչ և դերասան Դ. Էվերեկյանը հանդիսականներին ներկայացնում է մի հուզումնալի հատված դեռևս 1980-ի մայիսին Մոնրեալում իր բեմադրած՝ Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրամայից, ապա իր դստեր՝ շնորհալի դերասանուհի Ռոզալյա Վասիլյանի հետ՝ Հ. Այվազի¹⁵ «Շատերեն մեկը» վոդևիլից: Ցերեկույթի առաջին մասը եզրափակվել է մեկ ամիս առաջ Մոնրեալում Ա. Նշանյանի բեմադրությամբ ներկայացված Մ. Կյուրճյանի և Ե. Օտյանի «Չարշըլը Արթին աղա» կատակերգությունից մի զվարճալի պատկերի ցուցադրմամբ, որտեղ ծաղրվում է պոլսահայ վերնախավի օտարամոլությունը: Արթին աղայի դերակատար Ա. Նշանյանը իր անզուգական խաղով սրահում ստեղծում է խանդավառ ու աշխույժ մթնոլորտ:

¹² Վերոհիշյալ ցերեկույթի ականատեսը իր տպավորությունները հրատարակել է «Հորիզոն» շաբաթաթերթում (11.1.1982), որտեղ այդ կատակերգությունը վերագրել է ոմն Հայկազնի (ըստ երևույթին, խոսքը Կ. Պոլսի «Արմենյան» թատերախմբի երիտասարդ դերասանների դերուսույց Միհրդատ Հայկազի մասին է, որը, Կ. Պոլսից տեղափոխվելով Կանադա, հավանաբար, իր հետ տարել է նաև այդ գործը): Մեր պրպտումներից պարզվեց, որ այդ գործի հեղինակը պոլսահայ երգիծաբան Հովհաննես Ամիրենցն է (Ամիրյան, 1872-1966) [տե՛ս 3-3-Յ. Ամիրենց (Յովհաննես Ամիրենց), «Թի 5 խելագարը», «Քրքչալի կա-տակերգություն» (Կ. Պոլիս, 1921)]: Նա խմբագրել է «Զուռնա» երգիծական թերթը, հրատարակել «Ծիծաղներ» (1909), «Աղջիկներու լոթարիան» (1914), «Անկուտիներուն տարեցոյցը» (1915, 1919, 1921), «Ակնցի Հաճի աղան» և «Մամաթիացի Գոհար տուտուն» (1920), «Սինէմա հի հի հի, հա հա հա» (1921) գործերը և այլն: Հետագայում ձեռնադրվել է հոգևորական և մեկնել Բուենոս Այրես, դարձել տեղի հայոց քահանան:

¹³ Պարույր Մասիկյան (1914-) - սփյուռքահայ մշակութային գործիչ, իրավաբան: Ավարտել է Կահիրեի Բերբերյան վարժարանը: 1936-ին ավարտելով Փարիզի համալսարանը՝ և վերադարձել է Կահիրե, զբաղվել փաստաբանությամբ՝ միաժամանակ աշխատակցելով սփյուռքահայ մամուլին՝ «Արև», «Ջահակիր», «Սփյուռք» և այլն: Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Մեր կյանքը»՝ 1946, «Կոտրած խաչեր»՝ 1959 և «Տեղատարափ»՝ 1962: Վերջին գրքում ամփոփվել են թատերգությունները՝ «Թոռնիկս», «Խաչը», Միլիոնը» և «Աղջիկտեսը»: Ունի նաև այլ թատերգություններ («Էրզրումի կլոր պարը», «Մերը» և այլն):

¹⁴ Տե՛ս Արմեն, Արմենյան թատերախմբի ցերեկույթը Օթթաուայի մէջ, (Հորիզոն, 11.1.1982, էջ 3):

¹⁵ Հակոբ Այվազ (Այվազյան) (1911-) - սփյուռքահայ խմբագիր, թատերական գործիչ, ծնվել և գործել է Կ. Պոլսում: Ավարտել է Էսայան վարժարանը, հետագայում՝ զբաղվել ինքնագարգացմամբ: Ստանձնել է դերեր (Հորացիո՝ «Համլետ», Մեյրան՝ «Նամուս», Սուրեն՝ «Պատվի համար» և այլն) տարբեր թատերախմբերում, աշխատակցել պոլսահայ մամուլին: 1946-ին մեծ զրկանքների գնով հիմնադրել է «Քուլիս» թատերական երկշաբաթերթը, որի անփոփոխ խմբագիրն է եղել հիսուն տարի՝ որպես դրամագուլիս ունենալով միայն ուժեղ կամք և անհուն սեր արվեստի նկատմամբ: Գրել է նաև թատերգություններ, որոնք բեմադրվել են Կ. Պոլսում և Բեյրութում:

Հանդեսի երկրորդ մասում ներկայացվել են առանձին տեսարաններ սփյուռքահայ երգիծաբանների կատակերգություններից, ինչպես, օրինակ, տիպական տեսարան Գ. Պաղճյանի «Թաղականը» ազգային երգիծախաղից (որտեղ ծաղրի է ենթարկվում սփյուռքահայ գաղթօջախների շահամուլ թաղականների նյութապաշտությունը, որ զգալի վնաս է հասցնում տեղի հայ զանգվածներին), հատված Հ. Ամիրենցի «Թիվ 5 խելագարը» կատակերգությունից (այստեղ ի ցույց են դրվում հասարակության տարբեր շերտերի հակասությունները): Պ. Մասիկյանի «Աղջիկ-տեսը» կատակերգության հատվածում դարձյալ ծաղրվում է նյութապաշտությունը: Լավ տպավորություն է թողնում հատկապես հոր դերակատար, փորձառու Արտո Նշանյանի համոզիչ խաղը՝ առաջացնելով հանդիսատեսների խինդն ու ծիծաղը: Յերեկույթի եզրափակիչ մասում Դավիթ և Բերկրուհի Էվերեկյան ամուսինները ներկայացնում են տեսարան Գրեմ Միմոնի¹⁶ «Հարս ու կեսուր» կատակերգությունից, դարձյալ արժանանում հանդիսատեսի ջերմ ընդունելությունը:

Անշուշտ, արժե արձանագրել, որ թատերաասմունքային ցերեկույթում «ներկայացուած բոլոր կտորներուն մէջ նկատելի էին դերասաններու ճոխ ու արտայայտիչ շարժումները որ օտարի մը անգամ հասկնալի կը դարձնէին ըսուած բառերուն իմաստը»¹⁷: Ընդհանուր առմամբ, թատերաասմունքային ցերեկույթը կարծես ներկայացնում էր «հայկական յատկանիշ մը բայց Արմէնեան թատերախումբի ու մանաւանդ Էվերեկյան ընտանիքին համար կը մնայ իրենց բազմապիսի ձիրքերը լրացնող սովորական կարողութիւն մը»¹⁸:

1982-ի նոյեմբերի 27-ին և 28-ին «Արմենյան» թատերախումբը Մոնրեալի Ութըրմոն վարժարանի լեւի-լեցուն թատերասրահում, Արտո Նշանյանի բեմադրությամբ, ներկայացնում է նրա կնոջ՝ Սիրվարդ Նշանյանի «Երեսուն տարի վերջ» երգախառն թատերգությունը, որն արժանանում է մոնրեալահայ անվերապահ բարձր գնահատականին: Դա, իրոք, նորույթ էր կանադահայ հասարակության համար: Քանի որ մինչ այդ տեղի հայ համայնքը Ս. Նշանյանին ճանաչում էր որպես երաժիշտ, իսկ տվյալ պահին նա հասարակությանը ներկայանում էր որպես թատերագիր: Հավանաբար, Ս. Նշանյանն այդ գաղափարին հանգել է իր հոր՝ սփյուռքահայ ճանաչված խմբավար Երվանդ Ալեքսանյանի (1908-1981) հիշատակը հավերժացնելու նպատակով և գրել է երգախառն թատերգություն:

¹⁶ Գրեմ Միմոն (Միմոն Էքմեքճյան, 1891-1962) - սփյուռքահայ երգիծաբան, դերասան, ստորագրել է նաև Զինուոր Միմոն, Միմոնէ և այլ ծածկանուններով: Նվիրվել է արվեստի զանազան ճյուղերի՝ երգիծական ոտանավորներից մինչև թատերգություններ, աշխատակցել է պոլսահայ մամուլին՝ «Գավոռը», «Հոս-հոս», «Գիկո» և այլն: Հանրահայտ կատակերգություններն են «Դայի Կարապետ» և «Հարս ու կեսուր»:

¹⁷ Արմեն, նշվ. հոդվ., էջ 3:

¹⁸ Նույն տեղում:

Չնայած թատերգության բովանդակությունը պարզ է, այնտեղ չկան հոգեբանական խոր վերլուծություններ, բարդ իրադրություններ և հակադրություններ, սակայն մեծ հետաքրքրություն է առաջացրել հանդիսատեսների մեջ, քանի որ դա առաջին թատերական երկն էր, որի սյուժեն վերցված էր ժամանակակից մոնրեալահայ կյանքից, և որտեղ բավական վարպետորեն նկարագրված է նոր միջավայրի ազդեցությունը Մերձավոր Արևելքից գաղթած հայ ընտանիքների վրա, պատկերված է խորթ ու անսովոր բարքերի ու սովորությունների աստիճանական ներթափանցումը հայկական միջավայր: Ինչպես նշում է մամուլը, թատերգության «գործողությունները թեպետ հարուստ չեն..., սակայն կերպարները խիստ հարազատ են եւ ազգային ու կենցաղային իւրայատուկ գոյները շատ բնական»¹⁹: Թատերգության մեջ ճշմարտացիորեն է արտացոլվում ամերիկահայ և մոնրեալահայ նոր սերնդի տարբերությունը. մոնրեալահայ երիտասարդը ուշադրություն է գրավում իր հայախոսությամբ և հայեցի կեցվածքով: Դա Սփյուռքում թե տվյալ ժամանակահատվածի համար, թե ընդհանրապես, արդիական ու հրատապ թեմա է, որի վրա պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն սփյուռքահայ վարժարանների ուսուցիչներն ու դաստիարակները, այլև ամբողջ սփյուռքահայ հասարակությունը, այդ թվում նաև թատերագիրները:

«Հորիզոն» շաբաթերթը Ս. Նշանյանի թատերգության մասին գրում է. «Առաջին եւ վերջին սիրահարները չեն ասոնք՝ ո՛չ բեմի վրայ, ոչ ալ կեանքի մէջ: Բայց այս խաղի պարագային, հատկանշականը այն է, որ անցած օրերու բաղձանքով, նոսրալժիով թաթաւուն մթնոլորտ մը կը տիրէ, շնորհիւ յուզական երգերու օժանդակութեան: Սկիզբէն մինչեւ վերջ, հեղինակի հօր՝ **Երուանդ Ալեքսանեանի «Իմ խենթ գարնան»** երգի ոգին է որ կը տիրէ ամենուրեք»²⁰:

Գլխավոր դերերը կատարել են Նորա Անտոնյանը (Արփիկ) և Հրաչ Տեր-Սարգիսյանը (Արամ): Երգչուհի Նորա Անտոնյանը մեծ հաջողությամբ է ներկայացնում կյանքից դառնացած աղքատ սիրահար Արփիկի հոգեվիճակը՝ հաստատելով այն փաստը, որ առաջադիմել է որպես դերասանուհի, և իր հրապուրիչ ու երգեցիկ ձայնով գերել է հանդիսականներին²¹: Հրաչ Տեր-Սարգիսյանը, որն առաջին անգամ էր բեմ ելնում որպես դերասան, կարողացել է ճշմարտացիորեն մարմնավորել Արամի կերպարը: Ի տարբերություն Արփիկի, Արամը կենսուրախ մարդ է՝ չնայած ճաշակել է կյանքի դառնությունները: Նա չունի Արփիկի հոռետեսությունը և իր լավատեսությամբ, խանդավառությամբ ու անկեղծությամբ

¹⁹ Պասմաճեան Գ., «Արմենեան» թատերախումբը կը ներկայացնէ «Երեսուն տարի վերջ» թատերգութիւնը (Գեղարդ, 1982, - 61, էջ 28):

²⁰ Մ[ովսէսեան] Պ. Թ., «Երեսուն տարի վերջ»-ը բեմի վրայ (Հորիզոն, 10.1.1983):

²¹ Պասմաճեան Գ., նշվ. հոդվ.:

շահում է սիրած աղջկա սիրտը: Հ. Տեր-Սարգիսյանի կերտած հերոսը հանդիսատեսներին հրապուրել է նաև իր հուզական ու տպավորիչ երգեցողությամբ:

Ինչպես արձանագրում է մամուլը, բոլոր դերակատարներն էլ հաջող են կատարել իրենց դերերը, լուրջ թերացումներ չեն նկատվել: Նույնիսկ «ըսողներ կան, թե **«Արմենեան թատերախումբ»**-ի լաուզոյն խաղարկությունը եղաւ ասիկա: Բոլորն ալ իրենց դերին մէջ էին. կային՝ որ գերազանցեցին ինքզինքնին»²²: Իրենց աշխույժ պարերով ներկայացմանն առանձին շուք են հաղորդել պարողներ Մ. Տալտալյանը, Մ. Սայտամը և Լ. Աֆեյանը:

Նշենք նաև, որ միանգամայն իրավացի է թատերախումբ, երբ գրում է, թե Մոնրեալում կայացած «գոյգ օրերու ներկայացումները պսակուեցան յաջողութեամբ եւ սրահը լեցուն էր թատերասէր մեծաթիւ բազմութեամբ»²³: Առանձնապես պետք է հիշատակել շնորհալի դերուսույց-բեմադրիչ և դերասան Ա. Նշանյանին՝ «իր շատ պատշաճ դերաբաշխութեան համար», որը «տարիներու իրենց փորձառութեամբ ծանօթ դերակատարներու կողքին բեմ հանած էր նաև նորեկ ոյժեր, որ մեծ յաջողութեամբ տարին իրենց դերերը եւ դարձան հանդիսատեսներուն մասնաւոր ուշադրութեան առարկան»²⁴: Իսկ որպէս դերասան՝ Ա. Նշանյանն «իր գուարթաբարոյ բայց ջղային մարդու խաղարկութեամբ» թատերասրահում ստեղծել է «հիմըրով լեցուն մթնոլորտ մը»²⁵: Եվ, վերջապէս, իր այս անդրանիկ ստեղծագործությամբ գրական թատերական ասպարեզ մուտք գործած Սիրվարդ Նշանյանը, ներկայացման ժամանակ ղեկավարում էր նվագախումբը և հմտորեն նվագում երգեհոնը²⁶:

«Արմենյան» թատերախումբը 1982-1983 թթ. թատերաշրջանը եզրափակել է 1983-ի հունիսի 11-ին և 12-ին՝ շաբաթ և կիրակի օրերին, ներկայացնելով Ռ. Ֆերդինանի²⁷ «Տուն փեսայ» թատերախաղը՝ Ա. Նշանյանի բեմադրությամբ: Երեք արարից բաղկացած այս քաղքենիական կատակերգությունը, որը ֆրանսերենում կրում է «Շոթար և ընկերություն» խորագիրը, թարգմանել է վաստակաշատ

²² Մ[ոմճեան] Պ. Թ., նշվ. հոդվ.:

²³ Նույն տեղում:

²⁴ Պասմաճեան Գ., նշվ. հոդվ.:

²⁵ Մ[ոմճեան] Պ. Թ., նշվ. հոդվ.:

²⁶ Պասմաճեան Գ., նշվ. հոդվ.:

²⁷ Ֆերդինան Ռոժե (1898-1967) - ֆրանսիացի դրամատուրգ և սցենարիստ: Նրա մի քանի պիեսների հիման վրա ստեղծվել են կինոնկարներ: 19 կինոսցենարի («Նամակ»՝ 1930, «Շոթար և ընկերություն»՝ 1933, «Սիրահարը Բոննետյից»՝ 1942, «Օրիորդ Բեատրիս»՝ 1943, «Շախ արքային»՝ 1945 և այլն) հեղինակ է և մեկ կինոնկարի («Շոթար և ընկերություն», 1933) պրոդյուսեր: Եղել է Ֆրանսիայի դրամատուրգների և երգահանների միության նախագահը (1946-1955), Ֆրանսիայի թատերական արվեստի ազգային կոնսերվատորիայի ղեկավար (1956-1967):

դերասան և բեմադրիչ ժ. Սարգիսյանը²⁸ և դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին բեմադրել Բեյրութում: Վերոհիշյալ ներկայացումը նվիրվել է թարգմանիչ ժ. Սարգիսյանի հիշատակին, որը մեկ տարի առաջ հեռացել էր կյանքից:

Այս թատերախաղում ծաղրվում են Ֆրանսիայում տիրող քաղքենիական և գոեհիկ բարքերն ու սովորությունները:

Մամուլի վկայությամբ, «Արմենյան» թատերախմբի «դերակատարները բոլորն ալ իրենց կարելին ըրին խաղին յաջողութեան նպաստելու համար», իսկ «ժողովուրդը այլևս կասկած չունի անոնց խաղարկութեան մասին եւ նոր եղանակին հանրութիւնը կը փափաքի տեսնել ու վայելել աւելի գեղեցիկ, աւելի շատ բեմական յատկութիւններով օժտուած եւ մարգուած դերասաններու ներկայացումները, քանի որ գաղութիս մէջ միակ տեւական եւ մնայուն թատերախումբն է»²⁹:

Ինչպես միշտ իր խաղով աչքի է ընկել Ա. Նշանյանը, որը վարպետորեն մարմնավորել է նպարեղենի վաճառական Սիմոն Շոթարի կերպարը, որն սկզբում ապրել է գրկանքների մեջ, իսկ այժմ դարձել է նյութապաշտ ու սնափառ՝ փորձելով իր տգիտությունը ծածկել փառքի շղարշով: «Ամէն ատենուան պէս Արթո Նշանեան իր դերին մէջն էր. տարիներու փորձառութիւնը իր արդար վարձատրութեան ապացոյցն էր» - գրում է թատերախոսը: Այստեղ արժե հիշատակել, որ դեռևս 1975-ի մարտի 9-ին սփյուռքահայ վաստակաշատ դերասան և բեմադրիչ Ա. Վարդյանի (1898-1978) հորեյանի առթիվ Մոնրեալի Բլատոհոլ սրահում ներկայացվել է Ռ. Ֆերդինանի «Տուն փեսայ» կատակերգությունը, որտեղ վերո-

²⁸ Սարգիսյան Ժորժ (1915-1982) - սփյուռքահայ դերասան, բեմադրիչ և թարգմանիչ: Սովորել է Հալեպի Կիլիկյան ազգային և Բեյրութի Ս. Նշան վարժարաններում: 1941-ից Բեյրութի Համազգային մշակութային միության «Գասպար Իփեկյան» թատերախմբի հիմնադիր դերասաններից է, իսկ 1952-1980-ին՝ ղեկավարը: Մեծ վաստակ ունի լիբանանահայ թատերական կյանքում: Թատերախմբի հետ հյուրախաղերով հանդես է եկել Իրանում, Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում, Կիպրոսում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում և Բրազիլիայում: Բեմադրել է քառասունից ավելի պիեսներ, այդ թվում՝ Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքա՞ն դժվար է», Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», «Հին աստվածներ», «Կայսր», Հենրիկ Իբսենի «Ժողովրդի թշնամին», Նիկոլայ Գոգոլի «Ռևիզոր», Ռոժե Ֆերդինանի «Տուն փեսայ» պիեսները, Բաֆֆու «Ոսկի աքաղաղը» (բեմականացում՝ ժ. Սարգիսյանի), Շիրվանզադեի «Քառս» և այլն: Իր բեմադրություններում մարմնավորել է ուժեղ խառնվածքի կերպարներ՝ Վանահայր («Հին աստվածներ»), Նիկիֆոր («Կայսր»), Դոկտոր Շտոկման («Ժողովրդի թշնամին»), Քաղաքագլուխ («Ռևիզոր»), Սիմոն Շոթար («Տուն փեսայ»), Պետրոս աղա Մասիսյան («Ոսկի աքաղաղը») և այլն: Թարգմանել է 17 թատերախաղ: 1984-ին Բուենոս Այրեսում ի հիշատակ ժ. Սարգիսյանի կազմակերպվել է Համազգային մշակութային միության «Ժորժ Սարգիսյան» թատերախումբը:

²⁹ ԾիրվանեանԳ., «Տուն փեսայ» (Գեղարդ, 1983, - 64, էջ 14-15):

հիշյալ դերասանական խմբից հանդես է եկել միայն Ա. Նշանյանը՝ կատարելով դարձյալ Սիմոն Շոթարի դերը³⁰:

Հաջող են խաղացել նաև մյուս դերասանները:

1983-ին մոնրեալահայ թատերասեր հասարակայնությունը մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշել է սփյուռքահայ թատրոնի անխոնջ նվիրյալ Դավիթ Էվերեկյանի (ծնվ. 1927) բեմական բեղուն գործունեության 40-ամյակը: Նա թատերական աշխարհ է մուտք գործել Լիբանանում 1943-ին, երկար տարիներ անադմուկ և անսահման նվիրումով սատարել է հայ թատրոնը՝ դերասանական խաղով, բեմադրություններով, թատերախմբեր հիմնելով, թատերական լրատվություններ ու թղթակցություններ գրելով, մասնակցելով ինչպես տեղի, այնպես էլ հյուրախաղերի եկած թատերախմբերի ներկայացումներին, ինչպես, օրինակ, Գևորգ Պաղյանի (Վազգեն Այգունի) հիմնած «Ռուբեն Մամուլյան» թատերախմբի (1943-1945) աշխատանքներին: Նա նաև «Լիբանանահայ» (1946-1954), «Պետրոս Ադամյան» (1953-1957), «Քուլիսական» (1961-1966) թատերախմբերի հիմնադիրներից էր: 1975-ից հաստատվելով Մոնրեալում՝ շարունակել է իր գործը, նաև հրատարակել թատերական հուշագրություններ՝ «Թատերայուշեր» եւ «Նիւթեր լիբանանահայ թատրոնի պատմութեան» (Բեյրութ, 1971), «Թատերական կեանքիս ճամբուն վրայ...» (Լոս Անջելես, 1989) և «Միշտ ... թատերական կեանքիս ճամբուն վրայ» (Լոս Անջելես, 1999), որտեղ ճշմարտացիորեն ուրվագծել է լիբանանահայ արդեն իսկ կայացած ու զարգացած գաղթօջախի և կանադահայ նորակազմ գաղութի թատրոնների պատմության առանձին դրվագներ, ներկայացրել սփյուռքահայ մի շարք անվանի, այնպես էլ սիրող, դերասանների ազգանրպաստ գործունեությունը:

Իսկ Մոնրեալի «Արմենյան» թատերախմբի վարչությունը դեռևս 1983-ի մարտի 15-ին պաշտոնական գրությամբ Դ. Էվերեկյանին տեղեկացնում է, որ նրա բեմական գործունեության 40-ամյակը պատրաստվում է նշանավորել թատերախմբի առաջիկա բեմադրությամբ: Այդ նպատակի իրագործման համար ընտրվում է սփյուռքահայ բազմալստակ մտավորական Հ. Էսեկյուլյանի³¹ «Խղճի

³⁰ Տե՛ս Սոմճեան Պ. Թ., «Տուն փեսայ»-ն՝ Մոնթրեալի Բլաթօհոլի մէջ, (Հայրենիք, Բոստոն, 18.IV.1975):

³¹ Հարություն Էսեկյուլյան (1914-) - սփյուռքահայ մանկավարժ, գրող: Ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանը (1923), Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը (1936), սովորել է Անթիլիասի դպրեվանքում (1932-1934): 1936-1940 թթ. սովորել է Բոյուսելի համալսարանի մանկավարժության և հայագիտության բաժնում՝ աշակերտելով Նիկողայոս Ադոնցին: 1946-ին Լուվենի համալսարանում պաշտպանել է «Հայ վանքերը՝ որպես մշակութային օջախներ» (ֆրանսերեն) ատենախոսությունը և ստացել մանկավարժական գիտությունների դոկտորի աստիճան: Դասավանդել է Մելգոնյան վարժարանում (1946-1950, 1957-1972), Անթիլիասի դպրեվանքում (1950-1957), Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում, ՀԲԸՄ «Դարուհի

խայթ» թատերախաղը, որի բեմադրությունը վստահվում է հեղինակին, իսկ գլխավոր դերում (Գաբրիել Արևյան) առաջարկվում է հանդես գալ հորեկյարին: Ընտրվում են նաև մյուս դերակատարները և «վաստակաշատ եւ կենդանի համայնագիտարան մը հանդիսացող հեղինակին հետ» սկսվում են «այլեւայլ ծանօթութիւններով ու գիտելիքներով համեմուած» ամիսներ տևող փորձերը, որոնք «կը վերածուին անմոռանալի վայելքի պահերու»³²:

Վերջապես, երկարատև տքնաջան աշխատանքից հետո, 1983-ի նոյեմբերի 19-ին և 20-ին Մոնրեալում, «Արմենյան» թատերախումբը Մարի Անն լեփ-լեցուն թատերասրահում առաջին անգամ ներկայացնում է Հ. Էսեկյուլյանի «Խղճի խայթ» թատերախաղը, որը նվիրված էր Դ. Էվերեկյանի բեմական գործունեության 40-ամյակին: Չնայած այդ հանգամանքին, «շատ ցաւալի էր, որ այս առիթով տպուած հսկայածաւալ յայտագրին մէջ, տող մը չէր տրամադրուած այս իրադրութիւնը նշող, իսկապէս դժբախտաբար, երբ որոշ անձեր եկած էին յատուկ, միայն յարգելու Յորելիարին վաստակը»³³:

Նշենք, որ թատերախաղի հեղինակ Հ. Էսեկյուլյանը հոգեբանական նրբութ-
յամբ ու խորությամբ առաջ է քաշել հայ գաղթօջախների ամենատազնապալից մտահոգությունը՝ օտար միջավայրում հայ ընտանիքի այլասերման արդիական խնդիրը: Ինչպես նշվել է ներկայացման հայտագրում, ««Խղճի խայթ»-ը որպէս նիւթ ունի հայ սփիւռքը յուզող հարցերուն ամենէն այժմէականն ու հրատապը՝ այլասերումը»³⁴: Բեմադրությունը հանդիսատեսին համոզիչ կերպով ցույց է տալիս հայ ոգու, հայրենասիրության պայքարն ընդդէմ այլասերման և ձուլման: Թատերգության գլխավոր հերոսը՝ Գաբրիել Արևյանը, Մեծ եղեռնի արեւմտեցիկ փրկված մի որբ պատանի է, որն ապաստան է գտնում հեռավոր Ֆրանսիայում: Իր բազմամյա աշխատանքային փորձի, հետևողականության, ջանասիրության և նախաձեռնության շնորհիվ Գ. Արևյանը դառնում է հայտնի գործարանատեր: Հարստությունը և հանգստավետ կյանքը Գ. Արևյանին հեռու են պահում հայ իրականությունից: Սակայն հանգամանքների բերումով նա չի զգաստանում է և որոշում է վերադառնալ իր արմատներին: Արևյանի կերպարի մեջ խիստ նկատելի է բնավորության դրական ու բացասական գծերի սուր, հակադրական

Հակոբյան» աղջկանց վարժարանում, Մոնրեալի Կոնկորդիա համալսարանում: Գրել է բանաստեղ-
ծություններ, պատմվածքներ, գրական, մանկավարժական, պատմագիտական հոդվածներ և
պիեսներ՝ «Խղճի խայթ», «Ազգին ցաւերը», «Ո՞ր էր Հայոց Աստուածը», որոնք բեմադրվել են
Բրյուսելում, Կիպրոսում և Մոնրեալում: 1978-ին հիմնել է ՀԲԸՄ «Նոր այգ» ամսագիրը:

³² Էվերեկյան Դ. Յ., Թատերական կեանքիս ճամբուն վրայ..., Լոս Անձելլես, 1989, էջ 148:

³³ Նալպանտեան Մ., Արմենեան թատերախումբի Խղճի խայթ ներկայացումը, (Նոր այգ, 1983, № 50, էջ 8):

³⁴ Մոմճեան Պ. Թ., «Խղճի խայթ» (Էսեկիւլեանի համանուն թատերախաղի ներկայացումին առիթով), Հորիզոն (19.XII.1983):

պայքարը: Ի վերջո հաղթանակում են հայրենիքի սերը և ծնողական պարտականությունների կատարման գիտակցությունը:

Ասենք նաև, որ Հարություն Էսեկյույանի թատերախաղի թեման, որտեղ արծարծվում են «ուծացումի ուրուականին դեմ տարուած պայքարի իրադարձությունները»³⁵, այժմ նույնպես արդիական է, քանի որ մեր հայրենակիցներից ոմանք այսօր էլ փորձում են կտրվել հարազատ միջավայրից, իրենց «բարեկեցությունը» և «երջանկությունը» գտնել օտար միջավայրում, քանի դեռ իրենց կաշվի վրա չեն զգացել այդպիսի վարվելակերպի անօգտակարությունը:

Թատերախաղի գլխավոր հերոսի՝ Գաբրիել Արևյանի դերը կատարել է Դ. Էվերեկյանը: Նա հաջողությամբ է մարմնավորել իր հերոսի դժվարին ու հակասական կերպարը, համոզիչ կերպով ներկայացրել նրա բնավորության հակասությունները, հոգեկան խռովահույզ ապրումները, **խղճի խայթը** և վերադարձն իր արմատներին: Ականատեսների վկայությամբ, ներկայացումն ունեցել է մեծ հաջողություն, բոլոր դերասաններն էլ գրեթե անթերի են կատարել իրենց դերերը:

Այսպիսով, Հ. Էսեկյույանի **Խղճի խայթ** պիեսը սփյուռքահայ ընտանիքի զարթոնքն է, հրաժարումն օտարացումից և այլասերումից, հայ հոգու ու հայրենասիրության հաղթանակը:

Նոյեմբերի 20-ի ներկայացման ավարտից հետո շատ արվեստագետներ և արվեստասերներ արժանին են հատուցել Դ. Էվերեկյանին՝ բարձր գնահատելով այն դրական աշխատանքը, որ նա 40 երկար տարիներ կատարել է թատերական արվեստի աշխարհում: «Արմենյան» թատերախմբի ատենապետ Գաբրիել Պասմաճանն իր ելույթում իրավացիորեն շեշտում է՝ «թե՛ իսկապէս հերոսական գործ է սփիւռքի մէջ թատրոն պահել: Դ. Էվերեկյանն բոլոր զոհողութեանց բովէն անցած, հայ թատրոնի յաւերժահուր ատրուշանին հաւատարիմ սպասարկու անձնուէր արուեստագէտ մըն է»³⁶: Իրոք, սփյուռքում թատրոն պահելը շատ դժվար, բայց միաժամանակ ազգապահպան, ազգանպաստ գործ է, որը պահանջում է անվարձահատույց և անձնագոհ աշխատանք: Սփյուռքահայ ճանաչված դերասան Խորեն Տետեյանը իր մի հոդվածում գրում է, թե Էվերեկյանը «կ'ափսոսայ իր այն բեմընկերներուն վրայ որոնք թատերարուեստէն հեռացած են զիրենք արդարացնելով թե՛ սփիւռքի մէջ դերասանութիւնը անբաղձալի գոյավիճակի մը կը մատնէ մեզ: Ընդունելով վերոյիշեալ տեսակէտը, Էվերեկյանն կը նախընտրէ խընկարկել Մելփոմէնէի տաճարին, առանց նիւթական վարձատրութիւն սպասելու

³⁵ Նույն տեղում:

³⁶ Էվերեկյան Դ. Յ, նշվ. աշխ., էջ 148:

անկէ, եւ այդ նիւթական վարձատրութիւնը կը սպասէ իր առօրեայ աշխատանքին»³⁷:

Դ. Էվերեկյանի բեմական գործունէութեան 40-ամեակին և այդ կապակցութեամբ բեմադրված Խղճի խայթ ներկայացմանն անդրադարձել են սփյուռքահայ շատ պարբերականներ³⁸:

1984-ին կազմվում է 1976-ից Մոնրեալում կանոնավոր գործող «Արմենյան» թատերախմբի նոր վարչություն, որի մեջ ընդգրկվում են Ֆ. Էլմոքյանը, Հ. Պողէճյանը, Ն. Ուզունյանը, Ա. Արթինյանը, Ա. Փեսայանը, Ա. Նշանյանը և այլ արվեստասերներ³⁹: Նոր վարչության նախաձեռնությամբ թատերախումբը ձեռնարկում է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» երգիծական վիպակի բեմադրությանը. «Տիկ. Միրվարդ Նշանեան փոքր բարեփոխումներով զայն պատշաճեցուցած է բեմի»⁴⁰, և 1984-ի մայիսի 5-ին և 6-ին Մարի Անն վարժարանի թատերասրահում բեմադրիչ և դերուսույց Ա. Նշանյանի ղեկավարությամբ այն բեմադրվում է: Այս ներկայացմամբ «Արմենյան» թատերախումբն ավարտում է իր 1983-1984 թվականների թատերաշրջանը:

Գլխավոր դերում (Աբիստողոմ աղա) հանդես է եկել թատերախաղի բեմադրիչ Արտո Նշանյանը, որն «իր տարիներու փորձառութեամբ խաղին յաջողութեան անգամ մը եւս սատարեց, սրահին մէջ տեւական ծիծաղ յառաջ բերելով»⁴¹: Մյուս դերերով հանդես եկած դերասանները՝ Հ. Պողէճյանը, Պ. Քեոսեյանը, Շ. Էորերը, Վ. Օտապաշյանը, Ո. Միրասետին, Գ. Մերաքյանը, Դ. Էվերեկյանը և ուրիշներ «բոլորն ալ կարելին ըրին իրենց վստահուած դերերուն մէջ, սատարելով խաղին յաջողութեան, զոր տեւական խնդրներու եւ ծիծաղներու առիթ ստեղծեցին»⁴²:

1984-ի դեկտեմբերի 8-ին և 9-ին՝ շաբաթ և կիրակի օրերին, Մարի Անն վարժարանի թատերասրահում «Արմենյան» թատերախումբը ներկայացրել է Է. Լաբիշի⁴³ «Խնամիներ» թատերախաղը (բնագրում այն կրում է «Աչքակապություն» խո-

³⁷ Խոբէն Տէտէեան, Մեր սիրելի Դաւիթին գիրքը («Դաւիթ Յ. Էվերեկյան, Թատերական կեանքիս ճամբուն վրայ...», Լոս Անճելըս, 1989» գրքում, էջ 134):

³⁸ Տե՛ս, օրինակ, Ապագայ, Մոնրեալ, 12.XII.1983, Նոր կեանք, Լոս Անջելես, 29.XII.1983, Ջահակիր, Կահիրե, 26.I.1984 և այլն:

³⁹ Տե՛ս Արմէնեան թատերախումբ (Քուլիս, 1.XI.1984):

⁴⁰ Շ[իրվանեան] Գ., «Մեծապատիւ մուրացկանները» (Գեղարդ, 1984, - 70, էջ 8):

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

⁴³ Էժեն Մարեն Լաբիշ (1815-1888) - ֆրանսիացի դրամատուրգ, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ (1880): Ավարտել է բարձրագույն իրավաբանական դպրոցը: Գրական գործունեությունն սկսել է 1835-ին: Նրա սուր, երգիծական պիեսներում («Ծղոտե գլխարկը»՝ 1851, «Պարոն Պերրիշոնի ճանապարհորդությունը»՝ 1860, «Աչքակապություն»՝ 1861, «Թռչնակները»՝ 1862, «Միրելի Սելիմարը»՝ 1863, «Խնայատուփը»՝ 1864, «Ես»՝ 1864, և այլն) ցայտուն կերպով պատկերված են

րագիրը)՝ հանրաժանոթ ու սիրված արվեստագետ Դավիթ Էվերեկյանի բեմադրությունը: Կատակերգության թարգմանությունը, ավելի ճիշտ՝ փոխադրությունը, վերանշակումը՝ «հայացումը», նույնպես կատարել է Դ. Էվերեկյանը: Այս թատերախաղում սուր կերպով ծաղրվում են սնափառ մարդկանց քաղքենիական բարքերը, սովորությունները, ցուցամոլությունը, անմտությունը ու սնապարծությունը:

Թատերասեր հասարակությունը գոհ և բավարարված է հեռացել թատերասրահից, քանի որ «այս ներկայացումին չկային ակնբախօրէն անյաջող խաղարկություններ: Բոլորն ալ առաւել կամ նւագ չափով մէջն էին իրենց դերերուն»⁴⁴: Գլխավոր դերակատարներ Դ. Էվերեկյանը (բժիշկ) և Ա. Նշանյանը (նպարավաճառ) հաջողությամբ են ներկայացրել իրենց կերպարների նկարագրի փոփոխությունները:

Նշենք նաև այն կարևոր իրողությունը, որ Մոնրեալի «Արմենյան»-ն այն եզակի թատերախմբերից է, որը նոր ներկայացում բեմադրելիս հին դերասանների հետ միասին մշտապես ներգրավել է թարմ, երիտասարդ ուժեր և բեմահարթակ բարձրացրել նոր, խոստումնալից դերասանների: Այդ գործելակերպը միշտ էլ տվել է դրական ու գոհացուցիչ արդյունք: Բացառություն չէր նաև վերոհիշյալ ներկայացումը: Այստեղ առաջին անգամ բեմ են բարձրացել Ժ. Պաղպուտարյանը (բժշկի կինը), Զ. Ճղալյանը (Սոնյայի սիրահարն ու փեսացուն), Ա. Շիշմանյանը (բժշկի դուստրը) և ուրիշներ: Բոլոր էլ հաջողությամբ են կատարել իրենց ստանձնած դերերը: Ինչպես, օրինակ, խնամիների կանանց դերակատարները՝ Ժ. Պաղպուտարյանը և Դիանա Թորոտադը (նպարավաճառի կին), «իրենց բնական ու գեղեցիկ խաղարկութեամբ, մարմնացուցին՝ կապկելու եւ ցուցադրութեան բացառիկ դիմակաւորները»⁴⁵:

1985-ի ապրիլի 13-ին Մոնրեալում, ՀԲԸՄ Մոնրեալի մասնաճյուղի «Վահրամ Սուքիաս» սրահում հաղիսավոր կերպով նշվել է Կահիրեի «Ջահակիր» շաբաթաթերթի 35-րդ տարեդարձը: Երեկոյի գեղարեստական բաժնում ներկայացվել է Հակոբ Այվազի «Շատերեն մեկը» կամ «վերջին վարագույրը» թատերախաղը⁴⁶ (բեմադրիչ՝ Դ. Էվերեկյան):

վաշխառուների այլանդակությունները, սահմանափակությունը, կեղծավորությունն ու հաշվենդկատությունը: Վոդևիլի խճճված պոուժեի անսպասելի շրջադարձերը, զավեշտական ու ծիծաղելի դրությունները, սրամիտ երկխոսություններն ամրապնդել են Լաբիշի փառքը՝ որպես «վոդևիլի արքա»:

⁴⁴ Մ[ուսման] Պ. Թ., Խնամիները բեմի վրայ (Հորիզոն», 14.1.1985, էջ 4):

⁴⁵ Գոնաք Կ., նշվ. հոդվ.:

⁴⁶ Հակոբ Այվազի Շատերեն մեկը կամ «Վերջին վարագույրը» թատերգությունը առաջին անգամ ներկայացվել է 1949-ի մարտի 27-ին Կ. Պոլսում՝ Աշոտ Մադաթյանի բեմադրությամբ և հեղինակի գլխավոր դերակատարությամբ: 1961-ին ներկայացվել է նաև Բեյրութում, այնուհետև՝ Ջահլեում (Լիբանան):

Թատերգության մեջ հեղինակն արտացոլել է դրամատիրական իրավա-կարգում տեղ գտած այն բացասական երևույթները, որոնք քառասյին վիճակ են ստեղծել և արատավորել ընտանեկան օջախի սրբությունները: Հակասութ-յուններով լի ժամանակակից կյանքի ելնէջները պատկերող այս դրաման հանդի-սատեսին լարված վիճակում է պահում ամբողջ ներկայացման ընթացքում:

Գլխավոր հերոսի դերը կատարել է Հակոբ Էվերեկյանը: Ինչպես նշում է նախկին արևելահայ մտավորական, իսկ տվյալ պահին մոնրեալաբնակ Մ. Ղա-զարյանը, Հ. Էվերեկյանը, որը մարմնավորել է գլխավոր հերոսին, «խղճմտօրէն ու յաջողութեամբ իրագործեց իր դերը»⁴⁷:

Ռ. Վասիլյանը բավական վարպետորեն է անձնավորել թեթևաբարո և հաճո-յամոլ աղջկա՝ Հերմինեի կերպարը, որը գիտակցելով է իր անբարոյական կենսա-ձևը, ցանկանալով ամուսնության միջոցով խուսափել դրանից՝ որոնում է մեկին, որն իրեն դուրս կհանի այդ ապականված միջավայրից, սակայն դավաճանում է ամուսնուն՝ դառնալով իր իսկ անհավատարմության զոհը: Իրենց հերոսներին հաջողությամբ են կերպավորել նաև Գ. Գասպարյանը, Ա. Էվերեկյանը և Դ. Էվեր-եկյանը:

«Արմենյան»-ը 1984-1985 թթ. թատերաշրջանն ավարտում է 1985-ի հունիսի 15-ին և 16-ին՝ Մարի Անն վարժարանի թատերասրահում ներկայացնելով դրվագներ Շիրվանզադեի «Պատվի համար», Հ. Պարոնյանի «Շողոքորթը», Ե. Օտյանի և Մ. Կյուրճյանի «Հերոսախաղը» և «Չարշըլը Արթին աղա», Հարություն Էսեկյուլյանի «Խղճի խայթ», Ալեքսանդրովիչի «Աշխարհի դատաստանը» և այլ հեղինակների թատերգություններից: Բեմադրություններին մասնակցել են քսանից ավելի դերասաններ՝ Ա. Նշանյանի և Դ. Էվերեկյանի գլխավորությամբ: Ինչպես արդա-րացիորեն եզրակացնում է թատերախոսը, «Արմենեան թատերախումբի կողմէ պարբերաբար թատերասեր հանրութեան ներկայացուած տասը թատերախաղե-րու բարոյալի, յուզումնալի եւ զուարճալի տեսարանները պարզող կարգ մը հատուածներէ քաղուած այս «թատերափունջ»-ը կարծես վերաքաղ մըն էր անց-նող թատերական շրջաններու»⁴⁸:

Այսպիսով, 1981-1985 թթ. ժամանակահատվածում Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը կատարել է ազգօգուտ և ազգա-պահպան հսկայական աշխատանք, և, ինչպես նշում է «Քուլիս» հանդեսի հիմնադիր Հակոբ Այվազը, «Թատրոնը շատ աշխատանք կը պահանջէ բայց փոխարէնը գրեթէ ոչինչ կու տայ տարիներու ընթացքին»⁴⁹: Թատերախմբի հիմնական առանձնահատկությունն ու

⁴⁷ Ղազարեան Մ. Հ., Հետաքրքիր, խորիմաստ ներկայացում (Քուլիս, - 926, 15.VI.1985, էջ 8):

⁴⁸ Թատերական Հ. Օ. (Գեղարդ, - 77, 1985, էջ 16):

⁴⁹ «Ելիզբել» շաբաթաթերթի շափեկան հարցազրույցը Յակոբ Այվազի հետ. «Այվազ եւ թատ-րոնը», «Այս հիւանդութիւնը չվերջացաւ» (Քուլիս, 1990, նոյեմբեր, էջ 22):

առավելություննայն է, որ գործում է միանգամայն անկախ, միմիայն թատերական արվեստի ճանապարհով՝ չի հարում որևէ քաղաքական հոսանքի, առանց բացառության և խտրականության թատերախումբ է ընդունում աշխարհի բոլոր ծայրերից եկած՝ տարբեր գաղափարական հոսանքների, դավանանքների պատկանող հայորդիների և նպաստում նրանց հայապահպան գործունեությանը: Նշենք նաև, որ 1976-1985 թթ. ընթացքում «Արմենյան» թատերախումբը բեմադրության է պատրաստել ավելի քան տասը թատերգություն, որոնք տարբեր բեմահարթակներում ներկայացրել է գրեթե հիսուն անգամ:

ДЕЯТЕЛЬНОСТЬ МОНРЕАЛЬСКОЙ ТЕАТРАЛЬНОЙ ТРУППЫ "АРМЕНИЯ" (1981-1985)

БЕКАРЯН А. А.

Резюме

С 1976 года в армянской колонии Канады стала активно работать монреальская театральная труппа "Армения". Со дня своего создания и в особенности в 1981-1985 гг. труппа служила высоким национальным идеям на стезе искусства, способствовала сохранению национальной самобытности и национального духа. Актеры труппы "Армения" не примыкали к какому-либо политическому течению. В театральную труппу принимались все желающие независимо от их политических убеждений. При этом актеры труппы "Армения" могли одновременно работать и в других театральных труппах. Труппа "Армения" пропагандировала нашу многовековую культуру, являясь проводником национальной идеологии и искусства. За 1976-1985 годы театральная труппа "Армения" подготовила к постановке более десяти спектаклей, которые были представлены на сцене почти пятьдесят раз.

THE ACTIVITY OF THE THEATRE COMPANY "ARMENIAN" IN MONTREAL (1981-1985)

A. BEKARYAN

Abstract

Since 1976 the Theatre Company "Armenian" in Montreal has started to work actively in the Armenian community of Canada. From the first days of its establishment, especially from 1981 to 1985 the theatre company devoted itself to the high national ideas on the path of art, promoted the maintenance of national identity and spirit. The actors of the theatre company didn't join any political party. All the volunteers were accepted in the company regardless of their political beliefs. Moreover the actors of the theatre company "Armenian" could work in the other theatre companies simultaneously. The theatre company "Armenian" popularized our centuries-old culture being the bearer of the national ideology and art. Within 1976-1985 the theatre company "Armenian" staged more than ten performances which were performed almost fifty times.